ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/10, 24.01.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Փայլք» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցում, Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար կեցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ:

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «Փայլք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի 14.

հեռ. 098-98-32-68.

էլ.փոստ՝ marine.marine.1964@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե՝ ՀՀ, ք. Տաշիր Վ.Սարգսյան 94

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված *<<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02>>*

ծածկագրով գնանշման հարցում

Բողոք

Բողոքի նախապատմությունը, փաստերը.

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է *<<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02>>* ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ), որին 26.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն և հանանչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 26.12.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 75.000 ՀՀ դրամ:

ՄՄՏՀ N 2516 19

«24» 01 19

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6 րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,3-րդ,4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև 1 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 50.000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն 26.12.2018թ.-ի դրությամբ /հայտ ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 75.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի մոտ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է **«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:**

Սակայն, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կողմից *<<ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02>>* ծածկագրով կազմակերպված ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» բաղվածքի համաձայն՝ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ն 26.12.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ << ՓԱՅԼՔ>> ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է

հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշիվ բարտի» տվյալները, որոնք ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 26.12.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի բարտի» բաղադրիչում վկայակոչված է ՀՀ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ բնող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել *«ՀՀԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-19/02»* ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքով,

«ՓԱՅԼՔ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Խանապյան

17.01.2019 թ.